ԾԱՆԱՐՆԵՐԻ ՑԵՂԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԵՐԸ ԴԱՐՅԱԼԻ ԼԵՌՆԱՆՑՔԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Հ. Դ. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

Սելևկյանների դեպի Անդրկովկաս կատարած էքսպանսիայի ժամանակաշրջանում, Անտիոքոս III Մեծի թագավորության տարիներին (242—187 մ. թ. ա.) ուշադրություն էր դարձվել ինչպես Դարյալի լեռնանցքի (որը այն ժամանակվանից սկսած հայտնի էր Ալանաց Դուռ անվամբ՝ Ἀλανῶν Πύλαι, Ptol., V, 8, 9, *պարսկ.՝* Dar-I-Alan, *վրացերեն՝* დარიალანი, *հայերեն՝ Դուռն Ալանաց), այնպես էլ ռազմա-վիրական ճանապարհի վրա, որոնք դիրքանալիի նշանակությունն ունեին Անդրկովկասի ժողովուրդների (ամենից առաջ վրացական ցեղերի) և Հյուսիսային Կովկասի հարթավայրերի քոչվորների հարաբերություններում։ Դրանով կարելի է բացատրել այն փաստը, որ Պտղոմեոսը (90—168 թթ.) արդեն գիտե Դարյալի լեռնանցքի մոտ, թերեք գետի (Պտղոմեոսը այն անվանում է* Ἀλάνα, Ptol., V, 8, 6) *շրջանում ապրող ծանարների ցեղը* Σαναρατοι (Ptol., V, 8, 13)։

Հայկական և վրացական աղբյուրներում ծանարների մասին ամենահին հիշատակությունը կապված է «Դուռնք Ալանացի» հետ։ VII դ. «Աշխարհացույցում» հիշվում է «ծանարք, յորում Ալանաց Դուռն»[1], *իսկ «Մոքցեվայ Քարթլիսայում» («Վրաց դարձ»)՝ «Մանարների կիրճը»* (ᲛᲐᲜᲐᲠᲗᲝᲡᲐ)[2]: *Միջնադարում (ինչպես և այժմ) վրացիներն այդ կիրճը, որը գտնվում է Վրացական ՍՍՀ-ի Ղազբեգի շրջանում, անվանում են «Խեվի»։ «Աշխարհացույցը», ինչպես և «Մոքցեվայ Քարթլիսայն», խոսելով «Դուռնք Ալանացի» ամրությունների մասին, նկատի ունեն VI—VII դդ., արաբական նվաճումներին նախորդող շրջանի դեպքերը։ Հատուկ նշանակություն ունի «Մոքցեվայ Քարթլիսայի» հաղորդումն այն մասին, որ պարսիկները Ալանաց դռների պահպանության գործը վստահեցին ծանարներին*[3], *որը նպաստեց այդ ցեղի հեղինակության ամրապնդմանը Կախեթի քաղաքական կյանքում։*

Համաձայն այդ հաղորդումների, ծանարներից ռազմիկներ էին զինվորագրում Դարյալի կիրճի սահմանամերձ ամրությունների պահպանության համար։ Սահմանապահ զորքը «Մոքցեվայ Քարթլիսայում» հիշված է «գումարդի» (გომარდი) *բառով, որը համապատասխանում է հայերեն «գումարտակին»*[4]։ *«Գումարտակ» բառը ծագում է պահլ.* gumärtak-*ից և նշանակում*

---

1 *Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույցի», Երևան, 1963, էջ 102։*

2 მოქცევაჲ ქართლისაჲ, ძველი ქართული აგიოგრაფიული ლიტერატურის ძეგლები, წიგნი I (V—X სს), თბილისი, 1964, *էջ 95։*

3 *Նույն տեղում, էջ 94—95։*

4 *Հյուսիսային սահմանամերձ լեռնանցքների պահպանության համար նման կայազորներ կային նաև Զողա-Դերբենդում, որի մասին հիշատակում է Մովսես Կաղանկատվացին։ Նա հաղորդում է, որ Ազվանքի պարսիկ մարզպան Գայշաքը՝ «հայէր տեսանել, եթէ զինչ անցք անցանիցեն ընդ պահապանս մեծ քաղաքին Զողայ և ընդ գումարտակս սքանչելի պարսպաց նորա...». Մ ո վ ս է ս Կ ա ղ ա ն կ ա տ ո ւ ա ց ի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, II, ԺԱ, Թիֆլիս, 1913, էջ 153։*

է «կուսակալ»[5], որը հին վրացերենում՝ գոմարդաd դաադգոննա, այսինքն՝ ամրոցապահ զորքի պարագլուխ նշանակել[6]։ Հայերեն «գումարտակ» բառը փոխառություն է պահլավերենից gumartak. gumardak և նշանակում է «կուսակալ», որ իմաստաբանական առումով նույնանում է հին վրացերեն «մոնապիրեա» (մոնաձորը) հասկացությանը։

Ալանաց դռների պահպանության գործում ծանարների ցեղի խաղացած դերին անդրադառնալով, անհրաժեշտ է կանգ առնել «քորեպիսկոպոս» հայտնի տիտղոսի վրա՝, որը սկզբնական շրջանում, ըստ երևույթին, Դարյալի կիրճի շրջանի ժառանգական կառավարչի՝ ծանարների ցեղապետի տիտղոսն էր, իսկ հետագայում այն օգտագործվում է, որպես Կախեթի ֆեոդալական իշխանության կառավարչի հորջորջում։

Կախեթի ֆեոդալական իշխանության քաղաքական ղեկավարը վրացական աղբյուրներում կրում է «քորեպիսկոպոս» (ქორეპისკოპოსი) կամ «քորիկող» (ქორიკოზი) տիտղոսը։ Վերջինս «քորիսկուս»[8] ձևով հանդիպում է նաև արաբական աղբյուրներում։ Հայկական աղբյուրներում օգտագործվում է միայն «քորեպիսկոպոս» կամ «մեծ քորեպիսկոպոս» ձևերով։ XVIII դ. սկսած Վրաստանի պատմական անցյալի առաջին ուսումնասիրողներ Սուլխան-Սաբա Օրբելիանին[9] և Վախուշտի[10] արքայազնը գտնում են, որ նախապատվությունը պետք է տալ «քորիկոզին»։ Այդ կարծիքին են և ժամանակակից մի շարք վրացագետներ (Դ. Բաքրաձե, Լ. Մելիքսեթ-Բեկ, Մ. Կակաբաձե, Ն. Բերձենիշվիլի)։ Վրացական[11] և հայկական[12] միջնադարյան պատմիչների երկե-

---

5 Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. Ա, Երևան, 1971, էջ 592։

6 Հմմտ. С. Н. Какабадзе, О племени цанар, „Исторический сборник" (საისტორიო კრებული), кн. 3, Тифлис, 1928, էջ 104, ծանոթ. 2։

7 Այս տիտղոսի մասին տե՛ս Ց. Ք. ԼՈՐԹՔԻՓԱՆԱՁԵ, ֆեոդալური საქართველოს პოლიტიკური გაერთიანება՝ თбилисი, 1963, էջ 151—152; Ш. ա. ԲԱԴՈՅԵՎ, Ղեկավարելու ქორეპისკოპოსის ინსტიტუტის საკითხისათვის კახეთის სამთავրոში (К вопросу о ведущем институте власти в Кахетии), „Մաცնե", 1964, № 5, էջ 87—99; С. Н. Какабадзе, նշվ. աշխ., էջ 109—111։

8 Масуди, տե՛ս Н. А. Караулов, Сведения арабских географов IX и X вв. о Кавказе, Армении и Азербайджане, в сб. „Материалы для описания местностей и племен Кавказа", вып. XXXVIII, Тифлис, 1908, стр. 57.

9 სულხან-საბა ORBელიანი, ლექსიკონიჲ ართული. თბილისი, ტ. IV₂, 1966, էջ 231։

10 ეახუშტი, საქართველოს ისტორია, ნაწილი, დ. ბაქრაძის გამოცემა, თбилисо, 1885, էջ 123—124,

11 ქართლის ცხოვრება, ს. ყაუხჩიშვილის რედაქციით, თбилисо, ტ. I, 1955, էջ 254, 257, 262—263, 268—269, 271, 278։

12 «Անդ ապա մեծ քորեպիսկոպոսն, որ պայազատէրն իսկ զմասն Գուգարաց (sic.!) մերձ ի Դրունս Ալանաց՝ գայր հասանէր զորու բազմաւ ի Թիկունս օգնականութեան թագաւորին» (Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1912, էջ 301—302)։ «...եվ մինչդեռ թագաւորն առկայացեալ յՈւտի գաւառի համոզել նուաճել զխստապարանոց աւազակուտ մարդիկ աշխարհին, յանկարծակի դիմեալ չուեալ գնացեալ Մովսէսն ի Սիսական կողմանցն՝ ի մտի դնէր երթալ առ մեծ քորեպիսկոպոսն ծանարաց և բարւոյ խոստմամբ միաբան ընդ իւր զնա կացուցանել և գրաւաթափ իւրոյ տէրութեանն լինել...», (նույն տեղում, էջ 303)։ Տե՛ս նաև Ուխտանէս եպիսկոպոս, Բ. Պատմութիւն բաժանման վրաց ի Հայոց, գլ. ԺԸ, Վաղարշապատ, 1871։ Այնտեղ կարդում ենք՝ «և այլ ևս գաւառք շուրջ զՏփխիս քաղաքաւ, որ կոչին Եանարք և Ջաւախք՝ և Թրեխք» (Ուխտանէս, Պատմութիւն, էջ 35)։

ռում որպես կանոն օգտագործվում է «քորեպիսկոպոս» տերմինը։ Միանգամայն հիշտ է նկատել Մ. Դ. Լորթքիփանիձեն, որ «Քարթլիս Ցխովրեբայում» («Պատմութիւն Վրաց») և ոչ մի պատմիչ չի հիշատակում «քորիկոզի» տերմինը. հիշված է միայն «քորեպիսկոպոսը»[13]։ Նեղ իմաստով «քորեպիսկոպոս» նշանակում է թեմի կառավարման գործում եպիսկոպոսի տեղակալ կամ օգնական, բայց ժամանակի ընթացքում «քորեպիսկոպոսը» դառնում է Կախեթի ժառանգական տիրակալի ավանդական տիտղոսը։ Այդ մասին են վկայում Զեղաղենի վանքի և Թորղա (Թորղա) ամրոցի ավերակ եկեղեցու արձանագրությունները[14], որոնք հնարավորություն են տալիս պատկերացում կազմելու Կախեթի տիրակալների տիտղոսների մասին։ Նրանցից մեկի՝ Աղսարթանի տիտղոսը հետևյալն է. «ուան [աց] և կախ [աց] [քոր] եպիսկոպոս և տիրակալ» [ՁՈՐ] ՅՅՅՈՍԱ(?) ԴԱ ՐԱՆ[ԹԱ] ԴԱ ԿԱԽ[ԹԱ] ՄՅԼՈՌԵԼՈ[15]։

Ծանարների ցեղի նման առանձնաշնորհ վիճակը նրանց հնարավորություն տվեց հետագայում, Սասանյանների տիրապետության վերացումից հետո, գլխավորել արաբական խալիֆայության դեմ պայքարող ցեղերին[16]։ Կախեթի այլ ցեղերի հետ միասին՝ ծանարները հերոսական պայքար էին մղում արաբական զավթիչների դեմ, որոնք այդ ցեղի անունով էլ խնդրո առարկա երկիրն անվանում էին «Սանարիա»։

Ծանարների հերոսական պայքարը խալիֆայության դեմ նոր ուժ էր հաղորդում հայերի և վրացիների ազատագրական պայքարին։ Օրինակ՝ երբ Վասպուրականում հայտնի դարձավ ծանարներից Բուղայի կրած պարտությունը, այդ ժամանակ Ապուչափր Արծրունու և նրա քեռորդի Ապումկդեմի գլխավորությամբ ազատագրական շարժումը նոր թափ ստացավ[17]։

Արաբական խալիֆայության դեմ մղված այս պայքարն ավարտվեց VIII դ. վերջում Անդրկովկասում նոր ֆեոդալական քաղաքական միավորման՝ Ծանարաց աշխարհի (իմա՝ Կախեթի) քորեպիսկոպոսության առաջացմամբ, որը հետագայում վերածվեց առանձին թագավորության (ըստ վրացական աղբյուրների՝ Կախեթի թագավորության)։ Ծանարների հետ միասին արաբների դեմ պայքարում էին նաև գարդաբանցիները՝ Կախեթի հարթավայրի բնակիչները։ Որոշ ժամանակի ընթացքում այս ցեղից դուրս եկած դինաստիային էր պատկանում քորեպիսկոպոսի՝ երկրի ժառանգական կառավարչի պաշտոնը։

Ծանարաց աշխարհի առաջին կառավարիչ Գրիգորը (վրաց. Գրիգոլ—786—827) նվաճեց Գարդաբանի նահանգը, որը ենթադրում է Թբիլիսիից հարավարևելք ընկած սարածքը։ Շատ ավելի ուշ, XVIII դ. արքայազն Վախուշտի Բագրատունին տալիս է Գարդաբանի նահանգի սահմանների նկարագրությունը[18]։ Նահանգը IX—XI դդ. պետք է որ գտնվեր Թբիլիսիի ամիրայության կազմում։ Ծանարների կառավարիչ Գրիգորի մահից հետո (827 թ.) իշխանու-

---

13 Ս. Դ. ԼՈՐԹՔԻՓԱՆԻՁԵ, նշվ. աշխ., էջ 152։

14 Տ. Ց. ԲԱՐՆԱՇՎԻԼԻ, კახეთის ისტორიული ძეგლების წარწერები, თბილისი, 1962 թ., էջ 74, 94։

15 Նույն տեղում, էջ 94։

16 Տե՛ս Թովմայ վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց, գիրք Գ, գլ. Ժ, ՍՊԲ, 1887, էջ 175—177։

17 Նույն տեղում, գիրք Գ, գլ. ԺԳ, էջ 195։

18 ВАХУШТИ, აღწერა სამეფოსა საქართველოსა (საქართველოს გეოგრაფია), თ. ლომოურის და ნ. ბერძენიშვილის რედაქციით, თბილისი, 1941, էջ 87։

թյունը (հավանաբար, Թբիլիսիի ամիրայի օգնությամբ) անցնում է գարդաբանցիների իշխող վերնախավին։

Կախեթի քաղաքական կյանքում ծանարների ունեցած առաջատար դերը IX դ. սկսած անցնում է գարդաբանցիների ձեռքը։ «Մատեան Քարթլիին» («Մատիանե Քարթլիսայ»)[19] հաղորդում է, որ շուրջ 830 թ. «գարդաբանցիները համաձայնության եկան և քորեպիսկոպոս ընտրեցին Քվաբուլի որդու Հովհաննեսի որդի Դաշիին, իսկ նրանից հետո այդպիսին նշանակեցին Սամուել Դոնաուրիին»։ Սամուել Դոնաուրիից (839—861) իշխանությունը ժառանգում է նրա եղբայրը (ըստ Վախուշտիի՝ եղբորորդի) Գաբրիել Դոնաուրին (861—881), բնագրում՝ «քորեպիսկոպոս էր Գաբրիել Դոնաուրին, Սամուել քորեպիսկոպոսի եղբայրը»[20]։

Դաշիի (ըստ Վախուշտիի՝ Վաչե, 827—839) ժամանակից սկսած և հատկապես Դոնաուրի տոհմի կառավարման շրջանից, այս քորեպիսկոպոսները իրենց իշխանության տակ են առնում Կախեթը և ջանում դառնալ նրա ժառանգական կառավարիչները, մի բան, որ որոշ ժամանակ նրանց հաջողվում է։ Բայց IX դ. 80-ական թվականներին դաբդաբանյան Դոնաուրիները զրկվում են իրենց իշխանությունից[21]։ Նրանց հպատակեցնում է հզորացած քորեպիսկոպոս Փադլան (881—993)[22]։

Երկրի քաղաքական կյանքում ծանարների խաղացած առաջատար դերի մասին է վկայում այն փաստը, որ հայկական աղբյուրները ծանարքի, իսկ արաբական և բյուզանդական աղբյուրները[23] Sanaria և Tzanaria-ի տակ ենթադրում են ամբողջ Կախեթը՝ այն առումով, որ տալիս է Վախուշտին[24]։ Հատկանշական է, որ խնդրո առարկա աղբյուրները ոչ մի տեղ չեն հիշատակում գարդաբանցիներին, որոնց հանդիպում ենք «Մատեան Քարթլիում»։ Նկատի ունենալով այս, Ս. Ջանաշիան գտնում էր, որ արաբական աղբյուրները ծանարների տակ ենթադրում են Կախեթի իշխանությունը քաղաքական առումով[25]։

---

[19] „მას ჟამსა შეითქუნნეს გარდაბანელნი და განაჩინეს ქორეპისკოპოსად დაჩი, ძე იოანე ქუაბულის ძისა და შემდგომად ამისისა დასუეს ქორეპისკოპოსად სამოელ დონაური", მატიანე ქართლისა, „ქართლის ცხოვრება", ტ. I, էջ 254։

[20] Նույն տեղում, էջ 257։

[21] მ. დ. ლორთქიფანაძე, Նշվ. աշխ., էջ 154։

[22] ხოლო ფადლა ქორეპისკოპოსი განძლიერდა და დაიმოარჩილა გაოდაბანელნი", მატიანე ქართლისა, „ქართლის ცხოვრება", ტ. I, էջ 262։

[23] Կոստանդին Միրանածինը իր «Բյուզանդական արքունիքի արարողությունների մասին» (De cerimouiis aniae byzantinae) երկրորդ դրքի 46-րդ գլխում տեղեկացնում է ոչ բյուզանդական իշխանավորներին ուղարկվող նամակների վերնագրերի մասին, որտեղ կարդում ենք՝ «Ալբանիայի (իմա Աղվանքի) իշխանին։ Կրավատաղեանների իշխանին՝ Կրևատաս կոչվածին։ Կեղոնիայի իշխանին։ Ծանարիայի իշխաններին (εἰς τοὺς ἀρχοντας Τζαναρίας)։ Սարվանի իշխանին, որոնք գտնվում են Ալանիայի և Ծանարիայի միջև (տե՛ս Կոստանտին Միրանածին, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1970, էջ 152)։

[24] ցաբ ղ ա ն ա ծ ի ն, Նշվ. աշխ., էջ 86—105, Մ. Լորթքիփանիձեն գտնում է, որ Ծանարիան նույնացվում է Կախեթի (ցաբեղ—ղ ղ ե ղ—ցանարեթու—գարդաբանու) հետ այն պատճառով, որ արաբների դեմ մղված պայքարում առավել ահեղ և առաջատար ուժը ծանարներն էին։ Բացի այդ, նա նշում է, որ արաբական աղբյուրները խոսելով XI դ. «հզրի դեղքերի մասին, Ջուրջանը (Վրաստանը) հակադրում են Ծանարիային։ Դա, ելդրափակում է հեղինակը, արդեն Կախեթի իշխանությունն է։ մ. դ. լ ո ր թ ք ի ֆ ա ն ի ձ ե ն, Նշվ. աշխ., էջ 144, 158—195.

[25] ս. ն. ջ ա ն ա շ ի ա, არაბობა საქართველოში, შრომები, ტ. II, თბილისი, 1952, էջ 278, 103,

Ծանարների պայքարը արաբական զավթիչների դեմ, Անդրկովկասի ժողովուրդների ժողովրդա-ազատագրական շարժման օղակներից մեկն էր, որը հանգեց հայ, վրաց և աղվանից ժողովուրդների պետականության վերականգնման։ Սրանց թվում էր նաև ծանարների ֆեոդալական իշխանությունը՝ Կախեթի քորեպիսկոպոսությունը, որը հետագայում վերաճեց առանձին թագավորության։

ПЛЕМЯ ЦАНАРОВ И ИХ РОЛЬ В ОХРАНЕ ДАРЬЯЛЬСКОГО ПРОХОДА

А. Г. МКРТУМЯН

Резюме

В период экспансии Селевкидов в страны Закавказья, в годы царствования Антиоха III Великого (242—187 г. до н. э.), было обращено внимание на Дарьяльский проход. Вероятно, с этого времени цанарам, жившим в районе истоков реки Терек, поручается охрана укреплений этого прохода, называемого Аланскими воротами.

Сведения о племени цанаров мы находим в «Армянской Географии VII в.» и в грузинском источнике XI в. «Мокцевай Картлисай» (Обращение Грузии). В последнем сохранилось интересное свидетельство о том, что в VI в. персы поручили цанарам охрану Аланских ворот. Естественно, что такое привилегированное положение цанаров способствовало укреплению авторитета этого племени среди других племен Кахети, что дало им возможность после падения владычества сасанидского Ирана возглавить народно-освободительную борьбу против арабского владычества.

Титул «хорепископ», который носил племенной вождь цанаров, становится традиционным и наследственным, обозначающим в то же время правителя грузинского феодального княжества Кахети.